# ՊԱՅՄԱՆԱԳԻՐ թիվ 2

ք. Երևան

« 19 » մայիսի 2020թ.

Դատական դեպարտամենտը՝ ի դեմս ղեկավար Կ. Փոլադյանի, որը գործում է Դատական դեպարտամենտի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Վի Գրուպ» ՍՊԸ-ն՝ ի դեմս Ընկերության տնօրեն Հմայակ Ստեփանյանի (այսուհետև՝ Կատարող), որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա՝ մյուս կողմից, երկուսը միասին այսուհետ՝ Կողմեր, ղեկավարվելով << քաղաքացիական օրենսդրությամբ և << կառավարության 2018 թվականի նոյեմբերի 22-ի «Պետական միջոցների հաշվին թարգմանչի, սուրդոթարգմանչի և տեսողական սահմանափակումների պատճառով հաշմանդամություն ունեցող անձի օգնականի ծառայություններ մատուցող անձին նշանակելու կարգը, նրա վարձատրության չափը և կարգը սահմանելու մասին» N 1334-Ն որոշմամբ սահմանված պահանջներով, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

## 1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է թարգմանչական ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետև՝ Ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Կատարողը Ծառայությունը մատուցում է Պատվիրատուին կամ նրա կողմից որոշված Ստացողին սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան՝ սույն պայմանագրով նախատեսված ծավալներով, ձևով և Պատվիրատուի կողմից սահմանված ժամկետներում, իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել այդ Ծառայությունը և վճարել դրա համար:

## 2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

**2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝**

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող Ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է սույն պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող կամ անպատշաճ որակի Ծառայություն.

ա) Չընդունել Ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի Ծառայությունը սույն պայմանագրին համապատասխանող Ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել սույն պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու Ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել սույն պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է սույն պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված Ծառայությունը չի համապատասխանում սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին.

բ) խախտվել է Ծառայության մատուցման ժամկետը:

2.1.4 Կատարողից պահանջել հատուցելու վնասները, եթե Պատվիրատուն Կատարողի կողմից պայմանագիրը խախտելու հետևանքով պայմանագրի գործողության ընթացքում, ինչպես նաև լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով ձեռք է բերել Ծառայություն՝ սույն պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ Պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև Ծառայությունն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

**2.2 Պատվիրատուն պարտավոր է՝**

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված Ծառայության արդյունքը, իսկ Ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու

4.1. Սույն պայմանագրով Պատվիրատուի [illegible] լեզուներից, լեզուներից հայերեն միջին բարդության իրավաբանական գրավոր թարգմանության 1 էջի համար **1850 (մեկ հազար ութ հարյուր հիսուն) ՀՀ դրամ**՝ ներառյալ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

4.1.1 Յուրաքանչյուր թարգմանության համար վճարվելիք գումարի կոնկրետ չափը որոշվում է պատվերանի, թարգմանչի, տեսողական սահմանափակումների պատճառով հաշմանդամություն ունեցող անձի օգնականի ծառայություններ մատուցող անձի և վարույթի մասնակիցների փոխադարձ համաձայնությամբ և չի կարող գերազանցել սույն պայմանագրի Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով սահմանված տվյալ ծառայության մատուցման համար նախատեսված գնի առավելագույն չափը:

4.1.2. Եթե փաստացի մատուցված ծառայության դիմաց վճարման ենթակա գումարը պակաս է Պատվիրատուի կողմից որոշված Ստացողին՝ առանձին տողով ունեցած բյուջետային հատկացումից, ապա Պատվիրատուն վճարում է միայն փաստացի մատուցված ծառայությանը համարժեք չափով, իսկ եթե փաստացի մատուցված ծառայության դիմաց վճարման ենթակա գումարը ավել է Պատվիրատուի կողմից որոշված Ստացողին՝ առանձին տողով ունեցած բյուջետային հատկացումից, ապա այդ մասով վճարման ենթակա գումարի չափի վերաբերյալ հարցը կարգավորվում է Կողմերի միջև կնքվող համաձայնագրով, որը հանդիսանում է սույն պայմանագրի անբաժանելի մասը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած Ծառայության դիմաց վճարում է անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է Պատվիրատուի կողմից որոշված Ստացողի և Կատարողի հաստատած վավերագրի հիման վրա (եթե վավերագիրը Պատվիրատուն ստանում է տվյալ ամսվա 20-ից հետո, ապա վճարումն իրականացվում է 20 բանկային օրվա ընթացքում), բայց ոչ ավելի տվյալ ժամանակահատվածի համար նախատեսված գումարի չափից: Եթե ընտրված Ծառայության դիմաց վճարելու համար միջոցները չեն բավարարում, ապա վճարումը, սույն կետի պայմաններով, իրականացվում է այն ամսում, որում դրամական միջոցները նախատեսված են:

## 5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում Ծառայության մատուցման՝ սույն պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Սույն պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ սույն պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

5.3 Սույն պայմանագրով նախատեսված Ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված Ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են Ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

## 6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված Համաձայնագրերով պարտավորությունների ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար Կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը Կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի

պարտավորությունների կատարումը. Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա Կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից: Պայմանագիրը գործում է մինչև 2020 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ:

7.2 Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն պայմանագրի անբաժանելի մասը:

Սույն պայմանագիրը չի կարող փոփոխվել Կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի Կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման Կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.3 Սույն պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում Կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ Կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Սույն պայմանագրի Կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.4 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.5 Սույն պայմանագիրը կազմված է 4 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2 և N 3 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր Կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.6 Սույն պայմանագրից ծագած Կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց Կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Սույն պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան Կողմի գրավոր համաձայնության:

7.7 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է ՀՀ օրենսդրությունը:

## 8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ԿԱՏԱՐՈՂ |
|---|---|
| **Դատական դեպարտամենտ** | **«Վի Գրուպ» ՍՊԸ** |
| **ք. Երևան, Կորյունի 15/1** | **ՀՀ Կոտայքի մարզ, ք. Աբովյան 3 միկ.շրջ 23/18** |
| **ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն** | **«Ամերիաբանկ» ՓԲԸ** |
| **ՀՎՀՀ 02583241** | **Հ/Հ 1570015111280200** |
| | **ՀՎՀՀ 03538112** |
| **Ղեկավար Կ. Փոլադյան** | **Տիգրան Հ. Ստեփանյան** |
| (ստորագրություն) | (ստորագրություն) |
| Կ.Տ | Կ.Տ. |

«19» մայիսի 2020թ. կնքված
Թիվ 2 պայմանագրի

# ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ-ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

| Չափաբաժնի համար | Չափաբաժնի /ծառայության/ անվանում և բնութագիր | Ծառայության մատուցման միավորի գին՝ (ՀՀ դրամ) |
|---|---|---|
| 10 | Միջին բարդության իրավաբանական գրավոր թարգմանություն *հայերենից արաբերեն, արաբերենից հայերեն* | 1850 |

| Ծառայության մատուցման ընդհանուր ժամկետը |
|---|
| Ծառայության մատուցումն իրականացվում է այդ նպատակով համապատասխան ֆինանսական միջոցների առկայության և Կողմերի միջև կնքվող սույն պայմանագրի հիման վրա և գործում է մինչև 2020 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ: |

Միջին բարդության իրավաբանական թարգմանությունը՝ Պատվիրատուի կամ դատարանի կողմից հանձնարարված պատշաճ որակի թարգմանությունն է:

Նշագրային պահանջներ՝

1. Թարգմանիչների՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի դեկտեմբերի 20-ի «Թարգմանչի որակավորման կարգը սահմանելու մասին» N 1509-Ն որոշմանը համապատասխան որակավորված հավատարիմ անձ հանդիսանալը հավատարիմ համապատասխան փաստաթղթերը կցվում են յուրաքանչյուր թարգմանչական գործին:

2. Գրավոր թարգմանության դեպքում Պատվիրատուն՝ թարգմանվող տեքստը Կատարողին հանձնում է թղթային և էլեկտրոնային տարբերակներով: Կատարողը՝ տեքստը ստանալու օրվանից պատվերի որոշմամբ սահմանված ժամկետում կատարում է թարգմանությունը և Պատվիրատուին է ներկայացնում իր կողմից հաստատված թարգմանված տեքստը՝ թղթային և դրա էլեկտրոնային տարբերակներով:

3. Թարգմանված նյութերը պետք է տրամադրվեն առնվազն երկու օրինակից, իսկ Պատվիրատուի պահանջի դեպքում՝ նաև երեք օրինակից:

4. Թարգմանվող նյութերում կնիքի և ստորագրության առկայության դեպքում թարգմանությունը իրականացվում է հետևյալ կերպ՝

✓ Կնիքի առկայության դեպքում թարգմանվում է հետևյալ տեսակ՝ թարգմանվող լեզվով «Կնիք

շրջանակներում թարգմանվող նյութերի կնքված էջերի քանակը գերազանցում են 1-ը, ապա թարգմանվող նյութերում նույն կնիքը համապատասխան ձևով թարգմանվում է մեկ անգամ՝ թարգմանվող նյութերի վերջին էջում: Մեկից ավելի կնիքների առկայության դեպքում թարգմանությունը կատարվում է նշվածին համապատասխան նույն ձևով/

- ✓ Ստորագրության առկայության դեպքում թարգմանվում է հետևյալ կերպ՝ թարգմանվող լեզվով «Ստորագրություն» /եթե մեկ գործի շրջանակներում թարգմանվող նյութերի ստորագրված էջերի քանակը գերազանցում են 1-ը, ապա թարգմանվող նյութերում ստորագրությունը համապատասխան լեզվով թարգմանվում է մեկ անգամ՝ թարգմանվող նյութերի վերջին էջում: Մեկից ավելի ստորագրությունների առկայության դեպքում թարգմանությունը կատարվում է նշված և համապատասխան նույն ձևով/
- ✓ Թարգմանության ներկայացված նյութերում առկա՝ ժամանակագրական քանակները, վիճակագրական դիագրամները, ֆինանսական կամ այլ հաշվետվությունների վերաբերյալ աղյուսակները, ինչպես նաև այն նշումները, որոնք թարգմանության արդյունքում տարբերություն չեն ենթադրում, այսինքն՝ չեն թարգմանվում, ուստի չեն կարող հաշվարկվել որպես թարգմանված նյութի միավորներ.
- ✓ Եթե թարգմանության ներկայացված նյութերում առկա թվանշանների քանակը գերազանցում է 5 էջը, ապա դրանք թարգմանված փաստաթղթում արտացոլելու համար վճարվում է 5 էջին համարժեք չափով:

Ծանոթություն՝

1. Գրավոր թարգմանված նյութի մեկ միավորի գինը հաշվարկում է հետևյալ կերպ՝ մեկ էջի համար, այն պետք է բաղկացած լինի 1800 նիշից. բացատը նիշ չի համարվում.
2. Գրավոր թարգմանված՝ կես էջից ավել նյութը պետք է բաղկացած լինի 900-ից ավել նիշերից. բացատը նիշ չի համարվում.
3. Թարգմանված նյութը ներկայացվում է A4 ֆորմատով, տառերը 12 չափսով: Էջերի լուսանցքները՝ վերևից 20 մմ, ներքևից 25 մմ, աջից 15 մմ և ձախից 30 մմ, Միջտողային միջակայքը՝ 1.5:
4. Բանավոր և խուլ համրերի համար սուրդո թարգմանությունը կատարվում է Պատվիրատուի կողմից ներկայացվող պահանջի հիման վրա: Կատարողը՝ Պատվիրատուի պահանջը ստանալու օրվանից պատվերի պայմանով սահմանված ժամկետում կատարում է թարգմանությունը: Նշված թարգմանությունների մեկ միավորի գինը հաշվարկվում է ժամով, որը ներառում է բացառապես բանավոր նյութի փաստացի տևողությունը.
5. Եթե թարգմանության կամ այլ ծառայության համար ծախսված ժամաքանակի մեջ առկա է մի հատված, որը գերազանցում է 30 րոպեն, բայց պակասում է մեկ ժամից, ապա ժամաքանակի այդ հատվածը հավասարեցվում է մեկ ժամի, իսկ եթե ժամաքանակի մասը չի գերազանցում

առկա է մի հատված, որը գերազանցում է կես էջը, բայց պակասում է մեկ էջից, ապա այն հավասարեցվում է մեկ էջի, իսկ եթե թարգմանության մի հատվածը պակաս է կես էջից, ապա այդ հատվածը հավասարեցվում է կես էջի:

6. Գնման առարկա հանդիսացող թարգմանության ծառայությունները Դատական դեպարտամենտի առանձնացված ստորաբաժանումների կարիքների համար ձեռքբերվող թարգմանության ծառայություններ են, որոնք մատուցվում են Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքում (ներառյալ՝ ԼՂՀ Ստեփանակերտ քաղաքում գործող Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի նստավայրը): Ծառայության մատուցման գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ԿԱՏԱՐՈՂ |
|---|---|
| **Դատական դեպարտամենտ**<br>**ք. Երևան, Վազգեն Սարգսյան 5**<br>**ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն՝**<br>**ՀՎՀՀ 02583241** | **«Վի Գրուպ» ՍՊԸ**<br>**ՀՀ Կոտայքի մարզ, ք. Աբովյան 3 միկ.շրջ 23/18**<br>**«Ամերիաբանկ» ՓԲԸ**<br>**Հ/Հ 1570015111280200**<br>**ՀՎՀՀ 03538112** |
| **Ղեկավար Կ. Փոլադյան** | **Տիգրան Հ. Ստեփանյան** |
| (ստորագրություն)<br>Կ.Տ. | (ստորագրություն)<br>Կ.Տ. |

*« 19 » մայիսի 2020թ. կնքված*
*Թիվ 2 պայմանագրի*

# ՁԵԿՈՒՑԱԳԻՐ N
# ՄԱՏՈՒՑՎԱԾ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատու՝ _____
Կատարող՝ _____
Դատարանի անվանումը _____
Վարույթի անվանումը _____
Ձեկուցագիր ներկայացնող _____
Պայմանագրի շրջանակներում Կատարողը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

| N | Մատուցված ծառայությունների | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | անվանումը | տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը | քանակական ցուցանիշը | կատարման ժամկետը | Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/ | Վճարման ժամկետը |
| | | | ծառայությունների մատուցման ժամերի թիվը (եթե ծառայությունները մատուցվել են մի քանի օրում, ապա ժամերի թիվը նշվում է ըստ օրերի), թարգմանած էջերի թիվը | ծառայությունների մատուցման տարեթիվը, ամիսը, ամսաթիվը (ամսաթվերը, եթե ծառայությունները մատուցվել են մի քանի օրում). | | |
| | | | | | | |
| | | | | | | |

Վերոհիշյալ ծառայությունների մատուցման վերաբերյալ համաձայնությունները և բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն Ձեկուցագրի բաղկացուցիչ մասը:

Ծառայությունն ընդունեց

_____
ստորագրություն

_____
ազգանուն, անուն

Կ.Տ.

Ծանոթացա, համաձայն եմ
Կատարող՝ _____

*« 19 » մայիսի 2020թ. կնքված*
*Թիվ 2 պայմանագրի*

# ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N

(պետական միջոցների հաշվին թարգմանչի, սուրդոթարգմանչի և տեսողական սահմանափակումների պատճառով հաշմանդամություն ունեցող անձի օգնականի ծառայություններ մատուցող անձին վճարվելիք գումարի չափի վերաբերյալ)

______________________________________________

*(մատուցման իրականացման մարզի անվանումը)*

______________________________________________

*(թարգմանչի Ա. Ա. Հ.), (տեսողական սահմանափակումների պատճառով հաշմանդամություն ունեցող անձի օգնականի ծառայություններ մատուցող անձի Ա. Ա. Հ.)*

______________________________________________

______________________________________________

*(մարզպետի ներկայացուցչի Ա. Ա. Հ.)*

______________________________________________

______________________________________________

______________________________________________

համաձայնություն ձեռք բերեցին առ այն, որ 20   թ. ________-ին կնքված N ________ պայմանագրի շրջանակներում մատուցված ծառայությունների դիմաց Կատարողին *(ծառայություններ մատուցող անձ)* ենթակա է վճարման 1 (մեկ) էջի / 1 (մեկ) ժամի համար ______________________ ՀՀ դրամ գումար:

ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԿՈՂՄԵՐԸ

______________________
ազգանուն, անուն

______________________
ստորագրություն

______________________
ազգանուն, անուն

______________________
ստորագրություն

______________________
ազգանուն, անուն

______________________
ստորագրություն

______________________
ազգանուն, անուն

______________________
ստորագրություն